ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ

0078, ք. Երևան, Հալաբյան 41/Ա, հեռ. 380-389 էլ. փոստ info@moj.am


№ Ն-3336

«22» 06 2009թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարար պարոն Ն. ԵՐԻՑՅԱՆԻՆ

**Ի կատարումն մշտապես գործող ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեի 2009 թվականի հունիսի 4-ի թիվ Ֆ 22-220 արձանագրության 10-րդ կետի հանձնարարականի և ի պատասխան Ձեր 17.06.2009թ. թիվ 01/16.23/2306-09 գրության**

Հարգելի պարոն Երիցյան

Կից Ձեզ ենք ներկայացնում «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի օգոստոսի 28-ի թիվ 1101-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը:

Հարգանքով՝ Գ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության վարչություն՝ Կ. ՀԱԿՈԲՅԱՆ

22 06 9 4320

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի օգոստոսի 28-ի թիվ 1101-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

Նախագծի 1-ն կետն առկա խմբագրությամբ չի բխում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 8-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներից, որոնց համաձայն «Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում են տնտեսական գործունեության ազատությունն ու ազատ տնտեսական մրցակցությունը», մինչդեռ նախագծով սահմանվում են դրույթներ, որոնց համաձայն ԱԳԼՃԿ-ներ արդեն իսկ շահագործող անձանց համար սահմանվում են ավելի բարենպաստ պայմաններ, քան նոր ԱԳԼՃԿ-ներ կառուցողների համար, ինչի արդյունքում առաջ է գալիս անհավասար տնտեսական մրցակցություն, խախտվում է «տնտեսական մրցակցության ազատության սկզբունքը» և ԱԳԼՃԿ-ներ արդեն իսկ շահագործող անձինք հայտնվում են ավելի բարենպաստ և գերիշխող դիրքում քան նոր կառուցողները, ինչը մեր կարծիքով անընդունելի է:

Հաշվի առնելով վերոհիշյալն առաջարկում ենք, նախագծի 1-ին հոդվածը խմբագրել, նկատի ունենալով, որ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի օգոստոսի 28-ի թիվ 1101-Ն որոշման դրույթները պետք է տարածվեն արդեն իսկ շահագործվող ԱԳԼՃԿ-ների և նոր կառուցվող ԱԳԼՃԿ-ների վրա միաժամանակ:

Բացի այդ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի համաձայն ներկայացված նախագիծն անհրաժեշտ է համաձայնեցնել Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի հետ:

ՀՀ արդարադատության նախարարի
առաջին տեղակալ՝ Գ. ՄԱԼԽԱՍՅԱՆ

Իրավական ակտերի փորձաքննության
վարչության պետ՝ Կ. ԽՏՐՅԱՆ